

## ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՃԱՆԳ ՄԵՂՔԻՆ ԵՎ ԲՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԵՉՎՈՂ ՀԻՄՆԱՏԱՐՑԵՐ

Ներկայիս զարգացող աշխարհում աճում է ոչ միայն հանցագործությունների տեսակները, դրանց կատարման եղանակները, այլև դրանք կատարող սուբյեկտների տեսակները, ինչն անհրաժեշտություն է առաջացնում մտածել նրանց շրջանակն ընդլայնելու մասին: ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, որը հանցանք կատարելու պահին հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ իրավաբանական անձինք ևս համարվում են հանցագործության սուբյեկտ: ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաները պահանջում են մասնավորապես կոռուպցիոն հանցագործությունների դեպքում ունենալ իրավաբանական անձի արդյունավետ և պատշաճ պատասխանատվության մեխանիզմներ<sup>1</sup>: ՀՀ-ում իրավաբանական անձանց համար նախատեսվում է քաղաքացիական և վարչական պատասխանատվություն<sup>2</sup>: ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 126-րդ հոդվածը իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն է նախատեսում միայն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց համար՝ միանշանակորեն բացառելով որպես այդպիսին դիտարկել հանրային իրավունքի իրավաբանական անձանց, ինչպիսիք համարվում են Հայաստանի Հանրապետությունը, համայնքները, պետական կառույցները, միևնույն հոդվածով օրենքը քրեական պատաս-

խանատվություն չի նախատեսում նաև այն իրավաբանական անձանց համար, որոնց կանոնադրական կապիտալում պետությունն ունի մասնաբաժին: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սահմանումը թույլ կտա խուսափելու քաղաքացիական կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում միաժամանակ կոռուպցիոն հանցագործությունների նախատեսումից և դրանց համար սանկցիաներ սահմանելուց: Հարցի լուծման նպատակով պետք է հաշվի առնել, որ ձեռնարկատիրական, տնտեսական, սոցիալական իրավունքները զարգացել են այն ժամանակ, երբ քրեական իրավունքը վաղուց էր գործում: Մրանից հետևում է, որ «իրավաբանական անձ» եզրույթը ևս նոր է և պատկանում է իրավունքի ժամանակակից ճյուղերին: Ուստի իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սուբյեկտ ճանաչելու հարցի քննարկման մեջ հարկ է անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

Հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածը, որը սահմանում է, որ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները, արդյոք հնարավոր է իրավաբանական անձանց դիտել որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ:

19-րդ դարի գերմանացի իրավաբան-գիտնական Մավինիի «Իրավաբանական անձանց ֆիզիկայի տեսության» մեջ հեղինակը նշում է, որ իրավունքի իրա-

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2019 5 - 6 (239-240)

ՊԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



կան սուբյեկտ համարվում է միայն ֆիզիկական անձը: Պոզիտիվ իրավունքն իր հայեցողությամբ կարող է ընդլայնել կամ սահմանափակել իրավունքի սուբյեկտների շրջանակը: Այս տեսանկյունից իրավաբանական անձը ոչ այլ ինչ է, քան արհեստականորեն ստեղծված իրավունքի սուբյեկտ՝ բացառապես իրավաբանական նպատակով<sup>3</sup>:

Ըստ «Իրավաբանական անձանց պետական գրանցման» մասին ՀՀ օրենքի՝ պետական գրանցումը ստեղծվող իրավաբանական անձի իրավունակության ճանաչումն է պետության կողմից, և իրավաբանական անձը ստեղծված է համարվում պետական գրանցման պահից<sup>4</sup>: Ի տարբերություն ֆիզիկական անձանց՝ իրավաբանական անձանց իրավունակությունը և գործունակությունը ծագում են միաժամանակ:

Սուբյեկտիվ կողմից իրավաբանական անձի վերաբերմունքը գնահատելիս տարբեր իրավական համակարգերում տեղ գտած տեսությունների առանձնացվում է մեղքի արտահայտման 3 եղանակ<sup>5</sup>

**1. Սուբյեկտիվ կամ հոգեբանական:**

Տվյալ դեպքում մեղքի տեսանկյունից իրավաբանական անձը չի դիտարկվում որպես միասնական սուբյեկտ, մեղքը կրում է կա՛մ աշխատակիցը, կա՛մ ղեկավար մարմինը: Տվյալ մոդելը հարում է անհատականացման սկզբունքին, որը նաև սահմանվում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, որի 32-րդ հոդվածի համաձայն՝ այն ղեկավարում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, և եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի սեփականությունը, ապա սույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է իրավաբանական անձի ղեկավարը, եթե չի ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ: Այն անվանվում է նաև քվազիքրեական պատասխանատ-

վություն, որի դեպքում իրավաբանական անձը, որպես այդպիսին, հանցագործության սուբյեկտ չի համարվում, սակայն նրա նկատմամբ՝ ի դեմս ղեկավարի, կիրառվում է պատասխանատվություն: Սակայն այս մոտեցումը խնդիրն արդարացիորեն չի լուծում այն առումով, որ իրավաբանական անձի առանձին մարմիններին պատասխանատվության ենթարկելու դեպքում անգամ չկա որևէ երաշխիք, որ իրավաբանական անձը չի շարունակի հանրորեն վտանգավոր գործունեությունը: Բացի դրանից՝ սուբյեկտիվ մեղքի սկզբունքի հիման վրա է կառուցված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 60-րդ հոդվածով ամրագրված դրույթը, համաձայն որի՝ իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադրի (մասնակցի) պարտավորությունների համար, բացառությամբ սույն օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Այսինքն հնարավոր են դեպքեր, երբ սույն օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում պատասխանատվության կարող է ենթարկվել իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը):

Այս եղանակը նույնանում է՝ «ըստ նյութական մեղադրանքի պատասխանատվության սկզբունքի»՝ հետ, որը իրավական տարբեր համակարգերում տարբեր անվանումներ է ստացել. Ֆրանսիայում կոչվում է «անդրադարձ պատասխանատվության տեսություն», Նիդերլանդներում՝ «գործառությանի տեսություն», Մեծ Բրիտանիայում՝ «անհատականացման տեսություն»: Այս երեք տեսություններում փորձ է արվում ֆիզիկական անձի կատարած նյութական գործողությունը որոշակի ձևերով վերագրել իրավաբանական անձին<sup>6</sup>, սակայն թվարկված բոլոր տեսություններն էլ ընդունում են, որ մեղքն ի սկզբանե պատկանում է ֆիզիկական անձին, չնայած որ նա գործել է ի

շահ իրավաբանական անձի:

2. *Կարբազձային*: Այս դեպքում իրավաբանական անձի գիտակցությունն ու կամքն արտահայտվում են նրա մասնակիցների վարքագծային գործողություններում: Եվրոպական իրավունքում, մասնավորապես Անգլիայում և Ֆրանսիայում տարածված է այն դոկտրինը, ըստ որի՝ իրավաբանական անձի աշխատակիցների գործողությունները նույնացվում են հենց տվյալ կազմակերպության գործողությունների հետ: 1988 թ. դեկտեմբերի 20-ին Եվրոպայի խորհրդի անդամ երկրների նախարարների կոմիտեն հրապարակեց իր դիրքորոշումն իրավաբանական անձանց իրավախախտումների մասին, որտեղ ուշադրության է արժանի այն հատվածը, որում ասվում է. «Կորպորատիվ միավորի առանձին անհատների մեղք գոյություն չունի: Կազմակերպությունն ունի հստակ նպատակ, և նրա յուրաքանչյուր անդամի կատարած գիտակցված ու կամային գործողությունները ուղղված են կոլեկտիվ շահին: Այստեղ մեղքը դիտվում է իրավաբանական անձի վերաբերմունք՝ արտահայտված իր աշխատակիցների, պաշտոնատար անձանց, վարչական մարմինների գործողություններում: Այստեղ հստակ պետք է տարանջատում դնել կոլեկտիվ կամքի և գերիշխող կամքի միջև»: Վերջինս վերաբերում է միայն իրավաբանական անձի ղեկավար մարմինների անձնական կամքին: Այնինչ իրավաբանական անձի գործողությունը կամ անգործությունը պայմանավորում է նրա մարմինների, աշխատակիցների ընդհանուր ծառայողական գործունեությունը: ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 128-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած կարգավորումը, ըստ որի՝ հանցանքը համարվում է ի շահ իրավաբանական անձի կատարված, եթե հանցագործության նպատակների մեջ է եղել նշված կազմակերպության համար գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներ ստանալը, այդ թվում՝ եկամուտն ավելացնելը, ծախսերը կամ

կորուստները նվազեցնելը, իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից ազատվելը, իրավունքներ ձեռք բերելը կամ պարտականություններից ազատվելը, վկայում է մեղքի վարքագծային ձևով արտահայտված լինելու մասին: «Ի շահ իրավաբանական անձի» հասկացությունը նույնանում է «կոլեկտիվ շահի» հետ: Միևնույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում թվարկվում է անձանց շրջանակը, որի գործողությունների կամ անգործության համար իրավաբանական անձը կրում է պատասխանատվություն:

3. *Սոցիալական*: Նյութական մեղադրանքը քրեական իրավունքի կանոն է: Պատժի ենթակա վաստը, որպես կանոն, վերագրվում և մեղազրվում է այն անձին, որը նյութապես պատճառել է այն: Այսպես չէ իրավաբանական անձանց դեպքում: Եթե նույնիսկ ընդունենք, որ քրեական պատասխանատվության ենթակա է կոլեկտիվ սուբյեկտը, այնուամենայնիվ առկա է ֆիզիկական անձի գործողությունը կամ անգործությունը: Հետևաբար՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել՝ որքանով են այդ ֆիզիկական անձինք կարևորվում իրավաբանական անձի համար, որպեսզի նրանց՝ պատժի ենթակա գործողությունը կամ անգործությունը համարվեն իրավաբանական անձի կողմից կատարված: Դատարանը, գործողությունը իրավաբանական անձին վերագրելու համար պետք է մշտապես անցում կատարի ֆիզիկական անձից իրավաբանական անձին: Եվ ոչ միայն հակաօրինական գործողությունը կամ անգործությունը վերջինիս վերագրելու համար, այլ նաև կամքը՝ հանցանքի սոցիալական տարրը: Սոցիալական մեղքի գաղափարը տեղ է գտել մի շարք երկրների օրենսդրությունների մեջ՝ ԱՄՆ, Հոլանդիա, Եվրոպական որոշ երկրներ: Արևելյան իրավական գրականության մեջ հայտնի է այն միտքը, որ ֆիզիկական



անձի մեղքն ունի հոգեբանական բնույթ, իսկ իրավաբանական անձի մեղքը՝ սոցիալ-էթիկական: Տվյալ պարագայում իրավաբանական անձը քրեական պատասխանատվություն է կրում աշխատակցի կատարած իրավախախտման համար հետևյալ պայմանների առկայության դեպքում՝ աշխատակիցը գիտակցաբար անօրինական գործողություն է կատարել, տվյալ գործողությունն իրականացվել է իր իրավասության սահմանների շրջանակում, աշխատակիցը մտադիր է եղել օգտակար լինել կազմակերպությանը: ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի վերոհիշյալ կարգավորումները վերաբերում են նաև սոցիալական մեղքի ձևին, սակայն այստեղ պետք հաշվի առնել մեկ տարբերություն. իրավաբանական անձի սոցիալ-էթիկական մեղքի ձևը: Այս հանգամանքը տեղ է գտել ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 128-րդ հոդվածի 3-րդ մասում, որը սահմանում է, որ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը: Եթե հնարավոր չի եղել բացահայտելու կամ նույնականացնելու հանցանք կատարած ֆիզիկական անձին, ապա դա չի բացառում կատարված հանցանքի համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը: Այստեղ խոսքը գնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց պատասխանատվության համակցության սկզբունքի մասին, որը ճանաչվել է Եվրոպայի խորհրդի կողմից (մինևնույն փաստերով արարքի համար միաժամանակ կարող են պատասխանատվություն կրել մի քանի սուբյեկտներ): Այն բխում է սուբսիդիար պատասխանատվության սկզբունքից: Այսպիսի պատասխանատվության պարագայում հարկավոր է հաշվի առնել ֆիզիկական անձի դիտավորությունը: Նմանօրինակ դիրքորոշում է արտահայտել Մեծ Բրիտանիայի վերաքննիչ դատարանը՝ գետերի աղտոտման մասին «Alphacell Ltd.

v. Woodward (1972)» գործում: Նա իր որոշման մեջ դատապարտել էր իրավաբանական անձին, բայց նշել էր, որ դա չի նշանակում, որ ֆիզիկական անձը պատասխանատու չէր իր կատարած գործողության համար<sup>7</sup>: Հնարավոր է բյուրոմբռնում առաջանա, որ այս սկզբունքը բախվում է իրավունքի հայտնի «non bis in idem» (կրկին դատվելու անթույլատրելիություն) սկզբունքին, սակայն անհրաժեշտ է տարանջատել, որ իրավաբանական անձի մասնակիցը՝ որպես ֆիզիկական անձ կատարում է արարքի նյութական կողմը, սակայն նրա գործողությունը բխում է կոլեկտիվ շահից: Տվյալ դեպքում կոլեկտիվ շահով պայմանավորված և դրա նպատակով իրականացրած գործողությունը կամ անգործությունը կատարվել է սոցիալական մեղքի ձևով:

Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի՝ իրավաբանական անձի պատասխանատվության մասին կարգավորումները հավասարապես վերաբերում են մեղքի վարքագծային և սոցիալական ձևերին, որն էլ հանդիսանում է հանցակազմի սուբյեկտիվ կողմը:

Համեմատության համար նշենք, որ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 131-39 հոդվածով սահմանվող իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող պատիժների ցանկում առկա է «վերջնական կամ 5 տարի ժամկետով մեկ կամ մի քանի մասնագիտական կամ սոցիալական գործողությունների ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացման արգելման»<sup>8</sup> պատիժը, որն ընդգծում է՝ բացի մասնագիտական գործունեությունից, իրավաբանական անձինք իրականացնում են նաև սոցիալական գործունեություն՝ արտահայտված համապատասխան գործողություններով, հետևաբար այդպիսի գործունեություն իրականացնելիս թույլատրված խախտումներն իրենց մեջ պարունակում են «սոցիալական մեղքի» գաղափարը:

Քրեական պատասխանատվությունը, բացի օրենքով սահմանված լինելուց,

պետք է լինի նաև համաչափ և տրամաբանական: Հանցակազմի օբյեկտիվ կողմի տեսանկյունից՝ իրավաբանական անձանց նկատմամբ չպետք է սահմանվի հանցագործությունների այն ցանկն ամբողջական ծավալով, որը նախատեսվում է ֆիզիկական անձանց համար, որի հիմք կարող է հանդիսանալ լատինական կանոնն, ըստ որի՝ իրավունքը չի կարող ճանաչել այն, ինչն անհնար է (*lex non cogit ad impossibilia*): Այս տրամաբանությունից ելնելով՝ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 127-րդ հոդվածով սահմանվում են այն հանցագործությունները, որոնց համար իրավաբանական անձինք ենթակա են քրեական պատասխանատվության, դրանց թիվը հասնում է 191-ի: Համեմատության համար նշենք, որ Էստոնիայում հայտնի է հանցագործությունների 133 տեսակ, որոնց դեպքում իրավաբանական անձը կրում է պատասխանատվություն: Ցանկը ներառում է այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են շրջակա միջավայրի աղտոտումը, ներքին տեղեկատվության չարաշահումը, հարկերից խուսափելը, խարդախությունը, կաշառք տալը, սակայն հանցագործությունների ցանկում ընդգրկված չեն հարձակումը, գողությունը, սպանությունը<sup>9</sup>: ՀՀ քրեական օրենսգրքի նախագծով ցանկում չեն ընդգրկվում, օրինակ՝ կյանքը և առողջությունը վտանգի տակ դնող հանցագործությունները: ՀՀ-ի և Էստոնիայի դեպքում գործում է ընդհանրության սկզբունքը, քանի որ կան քրեական օրենսգրքով սահմանված հանցագործություններ (նշվում է բաժիններով և գլուխներով՝ հաճախ դրանցում առկա հոդվածներն ամբողջությամբ ամրագրելով), որոնք ընդգրկված չեն իրավաբանական անձանց պատասխանատվության հիմք հանդիսացող հանցագործությունների ցանկում, սակայն դրանք չնչին թիվ են կազմում: Ի հակադրություն այս տարբերակին, գոյություն ունի առանձնահատկության սկզբունք, որի դեպքում օրենսդիրը կարող է առանձնացնել հա-

տուկ հոդվածներ, որոնց պարագայում իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Այդպիսին է Ֆրանսիայի քրեական օրենսգրքը, որի 121-2-րդ հոդվածը վկայակոչող նորմ է, որի դեպքում առանձին հոդվածների է հղում կատարվում<sup>10</sup>:

Ինչպես նշվեց, ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 126-րդ հոդվածը իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն է նախատեսում միայն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց համար՝ միանշանակորեն բացառելով որպես այդպիսին դիտարկել հանրային իրավունքի իրավաբանական անձանց, ինչպիսիք համարվում են Հայաստանի Հանրապետությունը, համայնքները, պետական հիմնարկները. միևնույն հոդվածով օրենքը քրեական պատասխանատվություն չի նախատեսում նաև այն իրավաբանական անձանց համար, որոնց կանոնադրական կապիտալում պետությունն ունի մասնաբաժին: Դրույթի վերջին հատվածում տեղ գտած կարգավորումը, որը մասնավորապես վերաբերում է այն իրավաբանական անձանց, որոնց կանոնադրական կապիտալում պետությունն ունի մասնաբաժին, վիճելի է այն առումով, որ նույնիսկ պետության չնչին մասնաբաժնի առկայության դեպքում, տվյալ իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 121-2 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում բոլոր իրավաբանական անձանց համար՝ բացառությամբ պետության: Իսկ համայնքները կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել միայն իրենց լիազորությունների շրջանակում կատարած գործողությունների համար<sup>11</sup>: Սակայն Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 121-2 հոդվածի երրորդ պարբերությունը սահմանում է. «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը չի բացառում տվյալ հանցագործությունը



կատարող կամ մեղսակից ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը՝ 121-3 հոդվածի չորրորդ պարբերության դրույթին համապատասխան»։ Իսկ 121-3 հոդվածի չորրորդ պարբերությունն ասում է. «Նախորդ պարբերությամբ նախատեսված դեպքում, ֆիզիկական անձինք, որոնք ուղղակիորեն վնաս չեն պատճառել, սակայն ստեղծել կամ նպաստել են այնպիսի իրադրության ստեղծմանը, որի հետևանքով պատճառվել է վնաս, կամ նրանք, ովքեր չեն ձեռնարկել համապատասխան գործողություններ՝ խուսափելու համար, ենթակա են քրեական պատասխանատվության, եթե հաստատվել է, որ նրանք ակնհայտորեն և դիտավորյալ կերպով խախտել են օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված անվտանգության կամ զգուշության իրենց պարտականությունները կամ կատարել է ակնհայտ և այնպիսի առանձնակի լուրջ վտանգի տակ են դրել մեկ այլ անձի, որը չէին կարող կանխել»։ Նախորդ պարբերությամբ նախատեսում է. «հանցագործությունն առկա է, եթե օրենքով այն նախատեսված է, անզգուշության, անփութության, օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված անվտանգության կամ զգուշության պարտականության բացակայության դեպքում, եթե հաստատվել է, որ անհրաժեշտության դեպքում արարքը կատարողը չի ձեռնարկել պատշաճ գործողություններ՝ ելնելով իր պարտականությունների, գործառույթների, լիազորությունների, ինչպես նաև իշխանության կամ այն միջոցների բնույթից, որոնք նա տիրապետում է»։

Ուստի, ելնելով վերոգրյալից, առավել նպատակահարմար է քրեական պատասխանատվություն սահմանել հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց նկատմամբ՝ բացառելով պետությանը, իսկ մյուս իրավաբանական անձանց նկատմամբ նման պատասխանատվություն կիրառել միայն իրենց լիազորությունների շրջանակում կատարած

գործողությունների համար։

Ֆրանսիական քրեական իրավունքում պատիժները բաժանվում են երկու տեսակի՝ քրեական պատիժներ (10 տարուց ավելի ազատազրկումից մինչև ցմահ ազատազրկում) և ուղղիչ պատիժներ (մինչև 10 տարի ազատազրկում, տուգանք, հանրային աշխատանք և այլն)։ Անզգուշության, անփութության, օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված անվտանգության կամ զգուշության պարտականության բացակայության դեպքում կիրառելի են ուղղիչ պատիժները, ինչից հետևում է, որ իրավաբանական անձի անդամ հանդիսացող ֆիզիկական անձի նկատմամբ կիրառելի են ուղղիչ պատիժները։ Քանի որ իրավաբանական անձի նկատմամբ ազատազրկում կիրառել հնարավոր չէ, ապա բացառվում է նաև նրա ներկայացուցիչ ֆիզիկական անձի նկատմամբ ուղղիչ պատիժներից ազատազրկում կիրառելը, ինչը բխում է պատժի համաչափության սկզբունքից։ Այստեղից բխում է, որ ֆիզիկական անձի նկատմամբ կիրառելի է պատիժ՝ տուգանքի ձևով։ Սակայն ֆրանսիական իրավունքը չի մանրամասնում, թե ինչ չափով տուգանք պետք է նշանակվի տվյալ ֆիզիկական անձի նկատմամբ։

ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 131-րդ հոդվածն իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատիժների համակարգում նախատեսում է տուգանքը, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը, հարկադիր լուծարումը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը։

Պետք է նշել, որ չնայած ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 128-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած կարգավորման առկայությանը, նախագիծը հստակ չի սահմանում իրավաբանական անձի ներկայացուցիչ հանդիսացող ֆիզիկական անձի նկատմամբ նշանակվող պատիժները, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ

նրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ֆիզիկական անձի նկատմամբ նշանակվող պատժի տեսակները: Մակայն, այս տրամաբանությունը չի բխում պատժի համաչափության սկզբունքից: Ֆիզիկական անձի նկատմամբ պատժի նշանակելիս պետք է հաշվի առնվեն ոչ միայն կատարված արարքի՝ լիազորությունների շրջանակներում որևէ արարքի կատարումը, այլև դրա սուբյեկտիվ կողմը՝ շարժառիթները և մեղքի ձևը, ինչպես նախատեսվում է, օրինակ, ֆրանսիական իրավունքում: Եթե շարժառիթներն ուղղված չեն իրավաբանական անձի կոլեկտիվ շահին, ապա պատասխանատվության պետք է ենթարկվի ընդհանուր հիմունքներով: Եթե ֆիզիկական անձի գործողություններն ուղղված են իրավաբանական անձի կոլեկտիվ շահին, ապա նպատակահարմար է նրանց նկատմամբ նշանակվող պատժի սահմանել տուգանքը, սակայն

այս դեպքում կիրառել այնպիսի սահմանափակում, ըստ որի՝ իրավաբանական անձի ներկայացուցիչ հանդիսացող ֆիզիկական անձի նկատմամբ նշանակվող տուգանքը պետք է կազմի իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող առավելագույն տուգանքի որևէ մասը:

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության և միջազգային փորձը՝ կարող ենք փաստել, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրումը կարող է հնարավորություն տալ խուսափելու իրավաբանական անձանց կողմից կատարվող հանրային վտանգավորություն ներկայացնող գործողություններից կամ անգործությունից, իսկ դրանց դեմ անհրաժեշտ իրավական մեխանիզմների կիրառումը կնպաստի Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բարելավմանն ու զարգացմանը:

<sup>1</sup> 1973 թ. Եվրոպայի խորհրդի հանցավորության խնդիրներով Եվրոպական կոմիտեն օրենսդիրներին առաջարկել է կանգնել էկոլոգիական հանցագործությունների համար իրավաբանական անձանց հանցագործության սուբյեկտ ճանաչելու ճանապարհին: ՄԱԿ-ի հանցավորության կանխմանը և դատապարտյալների հետ վարվելուն նվիրված 9-րդ Կոնգրեսում քննարկել է իրավաբանական անձանց պատասխանատվության խնդիրը: Իսկ ներկայումս ՀՀ-ն միջազգային կառույցների կողմից կոռուպցիոն հարցերով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն նախատեսելու հանձնարարականներ ունի:

<sup>2</sup> «Հարկերի մասին» ՀՀ օրենքի չորրորդ գլուխը նվիրված է հարկ վճարողների կողմից հարկային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությանը: Նույն օրենքի 5-րդ հոդվածի իմաստով հարկ վճարողներ են հանդիսանում ֆիզիկական և իրավաբանական անձինք, հիմնարկները, տեղա-

կան ինքնակառավարման մարմինները:  
<sup>3</sup> Տե՛ս <https://studfiles.net/preview/6704355/page:3/>:  
<sup>4</sup> «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի հոդված 3-րդ:  
<sup>5</sup> Տե՛ս [http://www.panov.in/Dissertacia/Zapisi/2011/8/3\\_3\\_Osobennosti\\_opredelenia\\_viny\\_uridiceskih\\_lic.html](http://www.panov.in/Dissertacia/Zapisi/2011/8/3_3_Osobennosti_opredelenia_viny_uridiceskih_lic.html):  
<sup>6</sup> Տե՛ս La responsabilité pénale de la personne morale : une étude comparative, Sofie Geeroms, 1996, էջ 540:  
<sup>7</sup> Տե՛ս <https://www.casemine.com/judgement/uk/5a8ff8c960d03e7f57ecd6b7>:  
<sup>8</sup> Տե՛ս <https://www.legifrance.gouv.fr>:  
<sup>9</sup> Տե՛ս [http://www.juridicainternational.eu/public/pdf/ji\\_2009\\_1\\_151.pdf](http://www.juridicainternational.eu/public/pdf/ji_2009_1_151.pdf):  
<sup>10</sup> Տե՛ս <http://www.codes-et-lois.fr/code-penal/article-121-2>:  
<sup>11</sup> Տե՛ս [https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=B8180A3DCB07CD41FA04D3FA4F805257.tplgfr23s\\_2?idSectionTA=LEGISCTA000006149817&cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20190326](https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=B8180A3DCB07CD41FA04D3FA4F805257.tplgfr23s_2?idSectionTA=LEGISCTA000006149817&cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20190326):



## RESUME - РЕЗЮМЕ

### ISSUES OF GUILT AND RESPONSIBILITY OF LEGAL ENTITIES AND THEIR REPRESENTATIVES

Anna Khachatryan

*Undergraduate student of the French University in Armenia*

Different concepts of guilt of the legal entities and their representatives are analyzed in the article. To determine the guilt of legal entities having committed a crime, the possibility of application of the psychological approach and differentiation on their dominant will is proposed. At present the attitude to some problems of criminal law is very contradictory. Particularly, this refers to the institution of criminal liability of legal entities. The decision of guilt will allow resolving such a contentious issue as their criminal responsibility. The article discusses the experience of foreign countries and the prospects for using it in Armenia.

**Keywords:** *subject of crime; criminal responsibility; legal entity; guilt; dominant will.*

### ВОПРОСЫ ВИНЫ И УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ

Анна Хачатрян

*Студент бакалавриата Французского университета в Армении*

В статье анализируются различные концепции вины юридических лиц и их представителей, обосновывается возможность применения психологического (субъективного) подхода к определению вины юридического лица, совершившего преступление. Автор статьи предлагает определять вину юридического лица по доминирующей воле. В настоящее время отношение к некоторым проблемам уголовного права носит весьма противоречивый характер. Это, в частности, относится к институту уголовной ответственности юридических лиц. Решение вины позволит разрешить такой спорный вопрос, как их уголовная ответственность. В статье анализируется опыт зарубежных стран и перспективы его применения в Армении.

**Ключевые слова:** *субъект преступления; уголовная ответственность; юридическое лицо; вина; доминирующая воля.*

**Բանալի բառեր** - *հանցագործության սուբյեկտ, քրեական պարտասխանավորություն, իրավաբանական անձ, մեղք, իշխող կամք:*

**Ա. Խաչատրյան** - Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատի ուսանողուհի, էլ. փոստ՝ [annakhachatryan171717@gmail.com](mailto:annakhachatryan171717@gmail.com)

Ներկայացվել է խմբագրություն՝ 03.06.2019, տրվել է գրախոսության՝ 06.06.2019, երաշխավորվել է իրավաբանական գիտությունների թեկնածու Ս. Յուզբաշյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 17.07.2019